600.0453.04.12.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 դեկտեմբերի 2019 թվականի №453Ա

քաղ. Երևան

«ՍՄԱՐԹ ԼԱՅՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, հաշվի առնելով «ՍՄԱՐԹ ԼԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի նոյեմբերի 12-ի և Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2019 թվականի նոյեմբերի 19-ի №01/11.1/11807-2019 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ՍՄԱՐԹ ԼԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակից Արթուր Շահինյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասը Հայաստանի Հանրապետության քաղաքացի Գարիկ Էվոյանին օտարելուն:
2. «ՍՄԱՐԹ ԼԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել դրան առնչվող փաստաթղթերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՍՄԱՐԹ ԼԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՐՍԱՄՅԱՆ**

ք. Երևան
4 դեկտեմբերի 2019թ.